

կը մատուցուէին «ի սուրբ տեղիս ի վանորայս» (Քրդ. ամբ. 481). Ինչպէս Հրեայք ալ իրենց ամէն տեսակ պատարագները կը մատուցանէին ու կ'ուտէին սրբավայրին մէջ (Բ Օր. ժԲ, 5-7), որոց օրինակին՝ ըսինք՝ հետեւեցան ի սկզբան քրիստոնեայք եւս. եւ հեթանոսք արդէն նոյնպէս կը վարուէին (աստ, 314):

5. — Կոչևակսեր: — Մանդակունւոյն վերոյիշեալ վկայութեան մէջ տեսանք, զարտուղութեամբ սովորական ճաշերէն (աստ, 139), աղքատն ու հարուստ միասին հրաւիրուած: Հայրապետս, աւետարանական ուսմկավար մը մինչեւ ծուծը, սաստկապէս կ'ընդվզէր այդ սովորութեան դէմ, որուն ուղղած է ամբողջ Զ ճառը: Չէր հանդուրժեր նա՝ աշխարհիկ պատշաճութեանց հետեւանօք երկու դասերուն մէջ տիրող խտրականութեան, որ աչքի կը զարնէր սոյն հոգեւոր կոչնոց առթիւ եւս: Մէկ դասակարգը, կ'ըսէ, զարդարուած գաւթին մէջ «պատուով ի բազմականի» նստած, եւ միւսն՝ եթէ ներսը տեղ կար՝ «արհամարհանօք առ պատուանդանի» առաջնոյն, այս ինքն գետնի վրայ կծկած «զլխարկեալ», եւ մեծագոյն մասամբ գաւթէն դուրս մնացած (61): Առաջնոց սեղանէն կերակուր եւ զինի չեն